ՀԱՅՈՑ ԳՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԵՎԵՂԵՑՈՒ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՐԶ

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

20
F-43

135

280
727-FG
1478

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

2004

399-ԱՀ 1478

ԳՐԻԳՈՐԻՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՂԵՐԴԱՊԱՏՈՒԹԻՒՆ

Ի՞նչպէս Հաւատացեալ Գրիգորիոս Լուսաւորչի Հայոց։

Ի՞նչ ապրեցաւ ազգասիրութիւն
Լուսաւորչի՝ Հայոց Հոգեւոր Հայրապետի՝
Ի՞նչ ուխտեցաւ Աստուծոյ Հանդէպ
Նոցա ազգին և երկրին։

Զորս գրեաց անգամ

Տպագրեալ ՀԱՄԻ Տ՚ 1838։

ԻՎԱՆԵՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հանրապետական գրադարան
Ереванская Государственная Библиотека
1932
Ինվ. № 1005 հանր. 4032
Ինվ. № 1478

Աստուծաստէր՝ մանուկ ուշիմ՝
այսքը մա տիր.
յորդոր բանիս սրբոյն մըտաք՝
լեր ունկընդիր։
Ի՛զ վասքն քո՝ մանկացելոյն՝
զիմաստ ու. տիր.
սէր հաւատոյ քո խորհրդոց՝
լեր՝ի խրն դիր։
Օ՛ի՛ յարքունեն՝ հասակի քո՝
լեցիս ըն տիր.
աշակերտեալ՝ արքայութեան՝
երկնից դը պիր։

Յիսուսն մանուկն եւ սրբոյն Յոհան

L.R.

ՀԱՏԱԾ

Քրիստոնէական վարդապետութիւն:

Գլուխ Ա:

Յայտնութիւն Աստուծոյ:

Հարց:

Ո՞ւր ինչ ես:

Պատասխան:

Քրիստոնեայ եմ շնորհօքն Աստի:

Հ. Ինչ բանով քրիստոնեայ ես եղեր:

Պ. Հաւատալով 'ի Աստ, և մկրտութիւն առ առաքելոյն:

Հ. Քրիստոնէութիւն նշանը ո՞րն է:

Պ. Սէր խաչն է:

Հ. Խոստովանիր քեզի, որ տեսանեմ:

Պ. ✠ Յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Հ. Ո՞ւր բան պէտք է քրիստոնէին առ 'ի փրկիլ:

Պ. Հոս բան պէտք է, ՅԻ՝ Հաւատ, յոյս, սէր, և բարեգործութիւն:

Հ. Որն է հաւատն քրիստոնէին:

Պ. Այս երկու բանս հաւատալն է. ՅԻ. Ա,ախ՝ հաւատալ, թէ Ա՛ծ մէկ է, և երեք անձ ունի:

Երկրորդ՝ հաւատալ, թէ Որդին Ա՛ծ մեզի համար մարդ եղաւ, և խաչին վրայ մեռաւ:

Հ. Ինչ բանով կրնանք տրմիլ աս սէր հաւատքս:

Պ. Հաւատամքին խօսքերովը, զոր Ո՛ւղ տասներկու առաքեալները շարադրեցին, և սէր ժողովքները ճոխացուցին:

Հ. Անանկ է նէ, ըսէ զհաւատամքը, որ տեսնեմ:

Պ. Հաւատամք 'ի մի Ա՛ծ Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկ-

ըի, երևելեաց և անելուեթից։ Եւ 'ի մի ամ Հայ Բայ յորդին այ. ծնեալն յայ Հօրէ միածին, նախ քան զամ յաւիտեանս։ Աստ յայ, լոյս 'ի լուսոյ, Աստ ճշմարիտ, յայ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն համադոյակից Հօր, որով ամ ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներ-ևեոյթք։ Որ յաղագս մեր մարդ-կան և վասն մերոյ փրկութեն իջեալ 'ի յերկնից, մարմնացաւ, մարդա-ցաւ, ծնաւ կատարելապէս 'ի Սա-րիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբ-ով։ Որով էաւ մարմին, հոգի, միտ, և զամ որ ինչ է 'ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նստեալ մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Դարձեալ է նովին մարմնովն և փառաւք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս,

որոյ թագաւորութիւնն ոչ գոյ
վախճան։ Հաւատամք և 'ի սո՛
Հոգին յանեղն և 'ի կատարեալն,
որ 'ի Հօրէ և յԱրդւոյ բղխի։ Որ
խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս
և յաւետարանս. որ էջն 'ի յոր-
դանան, քարոզեաց զառաքեալն,
և բնակեցաւ 'ի սրտան։ Հաւատամք
և 'ի մի միայն յընդհանրական և
յառաքելական սո՛ Եկեղեցի։ Ի
մի մկրտութի. յապաշխարութի.
'ի քաւութի և 'ի թողութի մեղաց։ Ի
յարութի մեռելոց։ Ի դատաս-
տանան յաւիտենից հոգւոց և մար-
մնոց։ Յարքայութին երկնից։ Եւ
'ի կեանան յաւիտենական։ Ամէն։

Հ. Ես ասած Հաւատամքիդ ամմէն մէկ
խօսքը ինչ ասել է. գիտե՞ս մի։

Պ. Ամէնիկ մէկիկ հարցընես նէ, ամ-
պատասխանը կրնամ տալ ինձի
կէօրէ։

Ընանկ է նէ՝ սկսինք մէկիկ մէկիկ
հարցնել։

Գլուխ Բ։

Յաղագս Աստուծոյ, թէ ո՞է Աստուածն։

Հ. Աստուծ ի՞նչ է։

պ. Անէակ անհուն էակ մի է անմարմին, և ստեղծօղ երկնի և երկրի և ամենայն բանի։

Հ. Աստուծ ո՞ւր է։

պ. Ամենայն տեղ է, այ՛ի յերկինս, ՝ի յերկրի, ՝ի դժոխս, և այլ ամենայն տեղ։

Հ. Ի յերկինս ի՞նչպէս է։

պ. Անէակ մեծ թագաւորի մի պէս է։

Հ. Ի յերկրի ի՞նչպէս է։

պ. Անէակ մեծ առաքելորդի և հօր պէս է։

Հ. Ի դժոխս ի՞նչպէս է։

պ. Անէակ սատանիկ դատաւորի մի պէս է։

Հ. Թէ որ ա՞ծ ամենայն տեղ է, ուրեմն հոս ալ է։

պ. Իրաւունքս, հոս ալ է։

Հ. Թէ որ հոս է նէ՝ հապա ինչու չենք տեսներ զնա։

պ. Ասոր համար, զգալի անմարմին է, և չերևիր։

Հ. Որեղի՞ մէջ է ստեղծելը։

Պ. Աստուծոյ։

Հ. Ինչու՞ համար է ստեղծելը։

Պ. Աստուծոյ համար է ստեղծելը, որ զինքը ճանչնամ, սիրեմ, պաշտեմ, և իւր պատուիրանները պահեմ. և երբ որ մեռնիմ՝ նէ, արքայութիւն երթամ։

Հ. Աստուծ քանի՞ է։

Պ. Մէկ միայն է։

Հ. Անձը քանի՞ է։

Պ. Երեք է. որոնք են Հրեշտակութիւն ալ կըսենք։

Հ. Անուանները ի՞նչ է։

Պ. Հայր ամ. Որդի ամ, և Հոգի սրբ ամ։

Հ. Հայր ամ՞ է։

Պ. Իրամերես, ամ է։

Հ. Որդին ամ՞ է։

Պ. Իրամերես, ամ է։

Հ. Հոգին սրբ ամ՞ է։

Պ. Իրամերես, ամ է։

Հ. Անանկ է նէ, երեք ամ է։

Պ. Այո՛ լիցի, երեք անձինք, և մէկ ամ է։

Հ. Երկք անձանց որը մեծ է, որը պզտիկ է։

Պ. Երկքնակ հաւասար են. մեծ ու պզտիկ չիկայ մէջերնին։

Հ. Ինչու համար հաւասար են։

Պ. Որ համար, որ երկքնակ մէկ ոտ են, և մէկ բնութիւն, մէկ ոտութիւն, մէկ կարողութիւն, և մէկ իշխանութիւն ունին։

Հ. Այր ոտ ուսկից է։

Պ. Իրմէն է՝ի յաւիտենից, և ուրիշէն չէ։

Հ. Որդին ոտ ուսկից է։

Պ. Հայր Օրէ ծներ է՝ի յաւիտենից։

Հ. Հոգին սրբ ոտ ուսկից է։

Պ Հայր Օրէ և յՈրդւոյ ելած և բղխած է՝ի յաւիտենից։

Գլուխ Գ։

Հայրն Որդին Հոգին Աստուած է։

Հ. Քանի երկք անձանց որը մարդ եղաւ, կամ մարմնացաւ։

Պ. Միայն Որդին ոտ։

Հ. Ինչու համար մարդ եղաւ։

պ. Մեղի սատանային ձեռքէն և 'ի դժոխոց ազատելու համար։

Հ. Մարդ եղաւ ասելը ի՞նչ ասել է։

պ. Ասել է, թէ Արդին ած, որ յաւիտենից ած էր, 'ի ժամանակի եկաւ, մեղի համար մարմին առաւ, և մեղի նման մարդ եղաւ։

Հ. Ուսկից մարմին առաւ, և մարդ եղաւ։

պ. Ի Մարիամայ սրբ կոյս ածածնէն՝ զօրութիւն Հոգւոյն սրբոյ։

Հ. Որ օր մարդ եղաւ, կամ մարմնացաւ։

պ. Մարտի ամսոյն՝ իե՛ ին, աւետման օրը։

Հ. Քանի՞ ամիս ճնաց յարդանդի սրբ ածածնին։

պ. Ինն ամիս։

Հ. Որ օր ծնաւ։

պ. Դեկտեմբեր ամսոյն՝ իե՛ին։

Հ. Որ տեղ ծնաւ։

պ. Ի Բեթղէհեմ քաղաքի 'ի մսուրն անբանից։

Հ. Ընունը ի՞նչ դրին։

պ. Յն, որ յետոյ կոչեցաւ և Ռն։
հ. Յն ասելը ինչ ասել է։
պ. Փրկիչ աշխարհի ասել է։
հ. Ռն ասելը ինչ ասել է։
պ. Ծնեալ ոգի ասել է։
հ. Յն Ռն ինչ է։
պ. Կատարեալ ած է, և կատարեալ մարդ է։
հ. Ինչու համար կատարեալ ած է։
պ. Ասոր համար, վասնզի կատարեալ աստուծոյն բնութիւն ունի։
հ. Ինչու համար կատարեալ մարդ է։
պ. Ասոր համար, վասզի կատարեալ մարդկային բնութիւն ունի։
հ. Այսինքն մի և նոյն Ռն, կատարեալ աստուծոյն բնութիւն ունի, և կատարեալ մարդկային բնութիւն ունի, ուրեմն երկու բնութիւն ունի։
պ. Ադամեբես. Թէպէտ մի անձ է, բայց երկու բնութիւն ունի։
հ. Ասկից ծնաւ ասն մեր Յն Ռն։
պ. Ի Մարիամայ սրբ կոյս աստուածնէն։
հ. Ինչու համար աստուածնայ սրբ կոյս կըսես։

Պ. Ասոր համար կըսեմ, որ սը ածա-
ծինը կոյս մեաց յղացած ատենը
զԱն, կոյս մեաց ծնած ատենը,
և կոյս մեաց ծննդենէն ետքը 'ի
յաւիտեան։

Հ. Ով է Անի հայրը մարդկուն դիէն։

Պ. Ան մարդկութեն դիէն հայր չունի,
ինչպէս ածութեան դիէն ալ մայր
չունի, այլ զօրութեամբ Հոգւոյն
սրբոյ յղացաւ 'ի Մարիամայ սը կոյս
ածածնէն։

Հ. Ան ո՞րն մեր քանի՞ տարի ապրեցաւ
աշխարքիս վրայ։

Պ. Երեսունեւերեք տարի, և երեք ամիս։

Հ. Այնչափ ժամանակը ի՞նչ ըրաւ
աշխարքիս վրայ։

Պ. Աղօթեց, հրաշքներ գործեց, և
սրբոյութեան ճամբան՝ քանիւ և
գործքով մեզի սորվեցուց։

Հ. Ետքը ի՞նչ եղաւ։

Պ. Ջարչարեցաւ, խաչեցաւ, և մեռաւ
մեր փրկութենը համար։

Հ. Որ ժամանակ չարչարեցաւ, և մեռաւ։

պ. Ի ժամանակս Պիղատոսի դատաւորին. և անոր հրամանաւը խաչեցաւ.

հ. Ո՞ր բնութիւնը խաչեցաւ և մեռաւ։

պ. Անարդկային բնութիւնը, և ոչ աստուածութեամբը։

հ. Ո՞ւր տեղ խաչեցաւ և մեռաւ։

պ. Ի լեառն Գողգոթայ՝ Երուսաղէմ քաղաքին քովը։

հ. Ո՞ւնելէն ետքը մարմինը ուր դրին։

պ. Ի սրբ գերեզմանը։

հ. Քանի՞ օր մնաց 'ի գերեզմանը։

պ. Երեք օր։

հ. Քանի՞ հոգին մեռնելէն ետքը ուր գնաց։

պ. Գնաց լիմպոս, որ դժոխք ալ կըսուի. և անկից ազատեց արդարոց հոգիքը։

հ. Երեք օրէն ետքը ի՞նչ եղաւ։

պ. Յարեաւ 'ի մեռելոց։

հ. Ո՞ր օր յարեաւ։

պ. Ի զատկի սբ յարութիւն օրը։

հ. Ով յարոյց զՔրիստոս 'ի մեռելոց։

պ. Ինքը զինքը յարգց՝ իւր ածային զօրութիւնը։

հ. Եթե յարութեան քանի՞ ժամանակ մնաց աշխարքիս վրայ։

պ. Հաւասուն օր։

հ. Ընդ քառասուն օրը ի՞նչ ըրաւ։

պ. Իւր աշակերտացը տարվոյցուց քրիստոնէական հաւատոց խորհուրդները, և տվ Եկեղեցւոյ օրէնքները։

հ. Հաւասուն օրէն ետքը ո՞ւր գնաց։

պ. Համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր։

հ. Հոնայ Հն ո՞ւր է։

պ. Ընծութիւն դիէն ամմէն տեղ է. և մարդկութիւն դիէն երկինքն է. և 'ի տվ հաղորդութիւն։

հ. Հոգի համբարձմանէն ետքը ի՞նչ հանդիպեցաւ։

պ. Ես ելաւ. որ տասն օրէն ետքը Հոգին տվ եկաւ տվ առաքելոց վրայ. և առաքեալները Հոգւով տրբով լեցուցան, և գնացին քարոզեցին Հոգի տվ հաւատքը ամմէն աշխարք։

Հ. Բրդեաք Աստ վերատին պիտի գայ, թէ չէ։

Պ. Բրամերնս, 'ի կատարածի աշխարքիս պիտի գայ, ու դատաստան ընէ ամենէն մարդու իրենց գործոցը կէօրէ, արդարոց արքայութի պիտի տայ, և մեղաւորներուն դժոխք։

Հ. Իմանալուն մեռնող արդարոց հոգիքը ուր կերթան։

Պ. Թէ որ ամենևին սրբ են նէ՝ շիտակ արքայութիւնը կերթան, բայց՝ թէ որ ներելի մեղք ունենան նէ՝ կամ թողլած մահուչափ մեղքերուն պատիժը վճարած չըլլան նէ, քաւարանը կերթան։

Հ. Ապա մեղաւորներուն հոգիքը ուր կերթան։

Պ. Դժոխքը կերթան։

Հ. Թէ որ հիմայ արդարոց հոգիքը արքայութիւն կերթան, և մեղաւորներուն դժոխք. ուրեմն աւելորդ է, որ Աստ 'ի կատարածի աշխարքիս գայ դատաստան ընէ։

Պ. Անելորդ չէ, վասն զի հիմայ արդարները միայն հոգւով կերթան արքայութիւն, և մեղաւորները միայն հոգւով կերթան դժոխք։ բայց 'ի կատարածի աշխարքիս հոգւով և մարմնով պիտի երթան։ կամ թէ ըսենք, այն ժամանակը բոլոր մարդը պիտի երթայ։ անոր համար պէտք է, որ Աստ գայ դատաստան ընէ։ և ինքը սուրբերը արքայութիւնը, և մեղաւորները դժոխքը խրկէ։ հիմայ զհոգին կը խրկէ։ և այն ժամանակը զմարդը կը խրկէ։

Հ. Դատաստանքին մէջը հաւատալու ուրիշ բան ալ կայ մի։

Պ. Բաներս, աս ալ կայ, որ պիտի հաւատանք 'ի մի միայն կաթուղիկէ և առաքելական սրբ Եկեղեցի։

Հ. Եկեղեցին ի՞նչ բան է, կամ ո՞վ է։

Պ. Ի ժողով ամենայն քրիստոնեայ հաւատացելոց՝ մէկ երեսելի գլխու կառավարութիւն ներքևը։ որ այն գլխուն ամէնը պիտի հնազանդին։

Հ. Ո՞վ է աշխարքիս վերջը ան գլուխը։

Պ. Ի՛նչ սրբազան Պապը. կամ Հայրապետը հռոմէական սուրբ Եկեղեցւոյն։

Հ. Ո՞նչ ըսել է և ան ետքի բանը հաւատամքին որ կըսէ, 'ի յարութիւն մեռելոց. և 'ի կեանան յաւիտենական։

Պ. Ասել է, թէ ամէն մեռած մարդիկ 'ի կատարածի աշխարքիս պիտի յարութիւն առնեն իրենց մարմնովը, և կենդանանան։ Եւ ան հաւատացեալները՝ որ Աստուծոյ շնորհաց մէջը մեռած են, արքայութիւն պիտի երթան, և յաւիտենական կեանքը ժառանգեն։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ. ԳՐԱԴԱՐԱՆ ВНОЛЗОТОКЪ
ԱՄՐԱՀԱՄԱՐ ԱՆՈՒ ԱՆՈՒ
1000 ՍՀՇ. 4032
19959

Գ. Խոստովանութիւն։

Հ. Ի՞նչ հոգեւոր ուրեմն մարդուս ազատութիւնն է գլխաւոր ազատութիւն։

Պ. Այս մեր երկինքն է, զոր Աստուծոյ շարադրեց։

Հ. Ասէ, որ տեսանեմ։

Պ. Հայր մեր՝ որ յերկինս ես. սքանչելի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր. որպէս և մեք թողուցուք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ 'ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն։

Հ. Հայր մեր երկինքէն եռքը՝ ո՞ր աղօթքն է առաւել գլխաւոր և ընդունելի։

Պ. Աղջոյն քեզ Մարիամն է. որ անուամբ Աստուծմէ եռքը աղօթք կընենք առ ամենասքանչ մայր նր առ տիրամայր սքանչելը։

Հ. Ասէ, որ տեսանեմ։

Պ. Աղջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք. Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ Յիսուս։ Սրբուհի Մա-

բիսամ մայր Աստուծոյ. աղօթեսուք մեր մեղաւորացս այժմ և 'ի ժամու մահուան մերոյ. ամէն:

Հ. Ո՞վ շարադրեց Աղջիկն քեզ Անարիամը:

Պ. Կիսամը Գաբրիէլ հրեշտակը բասուկիսամը սրբուհին Աղիսաբէթ. և կիսամը սէր Աստուծոյն:

Հ. Ասացէք 'ի զատ ուրիշ աղօթքներ ալ կա՞ն ընդունելի Աստուծոյ, և մօր նոր սէր Աստուծոյ:

Պ. Բաներս կան ցր Յանդգրքին աղօթքները. Աստուած խոստովանիմը. Գարեկոյ աղօթքները. Աստուծոյ սէր Ա արդարանը, և Լիմանեան. Բրեշտակ ոն. Աղջիկներ թագուհին. և ասոնց նման ուրիշ բան աղօթքներ:

Գլուխ Ա:

Յաղագս պարտականութեանց Աստուծոյ:

Հ. Քանի՞ են Աստուծոյ պատուիրանները:

Պ. Տասն են:

Հ. Ինչ, որ տեսանեմ։

Պ. Ա. Ես եմ ձեր Աստված քո. մի ունիցիս զայլ ածս առաջի իմ։

Բ. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն։

Գ. Հիշեա՛ զօր շաբաթուն սրբել զնա, այլ զկիրակէս։

Դ. Պատուեա՛ զհայրդ քո և զմայրդ։

Ե. Մի սպանանես։

Զ. Մի շնար։

Է. Մի գողանար։

Ը. Մի ստուտ վկայեր զընկերէ քումմէ։

Թ. Մի ցանկար կնոջ ընկերի քո։

Ժ. Դե՛ մի՛ ամի, որ նորա է։

Հ. Ո՞վ տուաւ աս պատուիրանները։

Պ. Աստուծ 'ի հին օրէնս Մովսէս մարգարէին ձեռքով. և Դա՛ն ձեր մեր Հաստատեց զանունք 'ի նոր օրէնս։

Հ. Ո՞վ որ չի պահեր աս պատուիրանները. այնպիսին ինչ կը լայ։

Պ. Այնպիսի մարդը մահուշտի մեղք կը մեղանչէ, և դժոխքը կերթայ։

Հ. Քանի՞ են սրբ Եկեղեցւոյ պատուիրանները։

Պ. Հինգ են։

Հ. Ասէ՛, որ տեսանեմ։

Պ. ա. Յաւուրս կիրակէից և տօնից տեսանել զպատարագ։

բ. Պահել զպահս և զծոմապահս հրամայեալս։

գ. Ի տարւոջն գոնէ միանգամ խոստովանիլ։

դ։ Հաղորդիլ գոնէ 'ի տարւոջն միանգամ, ՚ի Զատկի յարուցեալն։

Ե. Տալ զտասանորդս ընչից։

Գլուխ Զ։

Յաղագս Խորհրդոց սրբոյ Եկեղեցւոյ։

Հ. Քանի՞ են սուրբ Եկեղեցւոյ խորհուրդները։

Պ. Եօթն են։

Հ. Ասէ՛, որ տեսանեմ։

Պ. ա. Մկրտութիւն։

բ. Դրոշմ։

ՁԳ. Ապաշխարութիւն։
ՁԴ. Աղօթքութիւն։
Ձ. Ի երկին օծումն։
ՁԶ. Կարգ քահանայութիւն։
Ձէ. Պսակ։

Հ. Ինկրտութիւնը ինչ է։

Պ. Ինչ խորհուրդ մի է Աստուծոյ, որ կրկնէ սկզբնական մեղքը, և մեզի Քրիստոնեայ և որդեգրական որդի Ն.Յ կընէ։

Հ. Որ է մկրտութիւն սպասաւորը։

Պ. Քահանան է. բայց հարկաւոր ժամանակը ուրիշ մարդ ալ՝ որ քահանայ չէ, կրնայ մկրտել։

Հ. Ինչպէս կը լսայ մկրտութիւնը։

Պ. Ես երկու բանով, ՅԻ երեխային վրայ ջուր լեցընելով. և ասելով այսպէս։ Ես անուն, մկրտի՛ ի ձեռն իմ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Կամ ըստ Աստուածաշունչ։ Ես մկրտեմ զքեզ յանուն Հօր, և այլն։

Հ. Դրոշմը ինչ է։

պ. Մէկ խորհուրդ մի է Եկեղեցւոյ, որ կը հաստատէ զմարդը 'ի հաւատն Յիսուսի։

հ. Ո՞վ է սպասաւորը դրոշմին։

պ. Եպիսկոպոսն է. և հրամանաւ սի՛ Եկեղեցւոյն՝ նաև քահանան։

հ. Ինչո՞վ կը լայ դրոշմը։

պ. Ջանալով դրոշմեցելոյն ճակատը զսի՛ մեռոնը. և ըսելով զձև բանին։

հ. Ապաշխարութիւնը ի՞նչ է։

պ. Մէկ խորհուրդ մի է Եկեղեցւոյ, որ կը ջնջէ մարդուն մեղքերը որ մկրտութենէն ետքը գործեր է։

հ. Ո՞վ է սպասաւորը ապաշխարութեան խորհրդոյն։

պ. Բանան ունեցող քահանան է։

հ. Ի՞նչ բան պէտք է քաւ խոստովանութիւն ընելու։

պ. Հինգ բան. ցա՝ Ինանութիւն։ Օգնութիւն Աստուծոյ. Խոստովանութիւն. և Ապաշխարանաց վճարումն։

հ. Անկնե՞ ինձի զասոնք մէկիկ մէկիկ։

պ. Աստուծ պէտք է, որ մարդ քննէ իւր

խղճմտանքը. միտքը բերէ գոր-
ծած մեղքերը։

բ. Ողջոյ, ՝ի ցաւի անուանց վրայ. և
աստուծմէ թողութիւն խնդրէ։

գ. Ուրաջադրէ, ՝ի նիւթ դնէ, որ
մէկ անգամ միւն ալ ան մեղքերը
չընէ։

դ. Երթայ խոստովանի քահանային
մէկիկ մէկիկ իւր ամէն մեղքերը։

Ե. Խոստովանահօրը դրած ապաշխա-
րանքը կատարէ։

Զ. Աղօթքը, կամ Սրբուհիը ի՞նչ է։

Ը. Ի մարմին, արիւն, հոգին, և ածու-
թիւնը Աստի, հացին ու գինւոյն
տեսակաց ներքևը։

Զ. Հացը ու գինին՝ երբ կըլլան մարմին
և արիւն Աստի։

Ը. Ան ժամանակը, երբ որ քահանան
պատարագին մէջը կըսէ հացին
վրայ՝ Սա՛ է իմ մարմին
է. և գինւոյն վրայ՝ Սա՛ է՝ ամա-
նէ ամենայնեան, այս է արիւն իմ։

Զ. Ուրէք կերէքէն եւ արբէք՝ի

սմանէէն եաքը կրմնան 'ի հայն
և 'ի գինին իրենց բնութիւնը։

պ. Հէ. Հապա միայն գրքի պատահմունքները կրմնան. այ համը, հոտը և ձևը. և անոնց ներքևը կայ ճշմարիտ մարմինը և արիւնը Քրիստի։

հ. Հաղորդութի կամ Սրբութի առնելու քանի՞ բան պէտք է։

պ. Երկու բան. այ մաքրութի հոգւոյ և մաքրութի մարմնոյ։

հ. Մաքրութի հոգւոյ ի՞նչ է։

պ. Այս է, որ մարդ խոստովանած ըլլայ իւր մեղքերը. և եաքը տուրը սրտիւ առնու սիր Հաղորդութիւնը։

հ. Մաքրութի մարմնոյ ի՞նչ է։

պ. Այս է, որ սրբութի առնելու օրը, կէս գիշերէն սկսեալ ծոմ կեցած ըլլայ. և մաքուր կենայ։

հ. Արդեօք պէտք է, որ մարդ հաղորդուած առնելը առնու հէմ մարմինը, հէմ արիւնը Քրիստի։

պ. Հարկաւոր չէ. միայն մարմինեալ առնելով ճշմարտապէս առած կրլ-

լայ Աստի մարմինը և արիւնը. ինչ-
պէս հոգեվարքը հիւանդաց միայն
մարմինը կուտան ամենայն ազգք
Քրիստոնէից։

Հ. Ինչու համար միայն մարմինը առ-
նելով՝ արիւնաց առած կը լայ։

Պ. Ասոր համար, մեզի կառնու զկեն-
դանի մարմինը Աստի, որ մի ա-
րիւնաց հետն է։

Հ. Հաղորդութի առնելէն ետքը, ի՞նչ
պէտք է ընել։

Պ. Պէտք է, որ մարդ էն քիչ մէկ շէյ-
րէկի մը չափ առանձին աղօթք
ընէ. և շնորհակալ ըլլայ Աստէ.
և խնդրէ անկից հոգւոյն և մարմ-
նոյն պէտք եղած բաները։

Հ. Հապա՝ ան մարդը, որ հաղորդութի
առածինպէս հիչ աղօթք չընէր.
այլ իսկոյն պարապ բաներու հետ
կը լայ՝ որոնն կընմանի։

Պ. Կընմանի յուդայի, որ երբ Աստի
մարմինը առաւ, իսկոյն ելաւ գնաց
մատնեց զԱստ, և ինքզինքը կախեց։

Հ. Վերջին օծումը ի՞նչ է։

Պ. Այնպիսի խորհուրդ մի է Եկեղեցւոյ, որ մարդուն ներելի մեղքերը ու մեղաց մնացորդները կը ջնջէ. և զօրութիւն կուտայ հիւանդին հոգւոյն, որ քաջապէս դէմ կենայ սատանային փորձութիւնեցը։

Հ. Որո՞ն պէտք է տալ վերջին օծումը։

Պ. Այնպէս ծանր և վտանգաւոր հիւանդաց։

Հ. Ի՞նչ է նիւթը վերջին օծման։

Պ. Ձէթն է՝ եպիսկոպոսէն օրհնած։

Հ. Կարգ քահանայութիւն ի՞նչ է։

Պ. Այնպէս խորհուրդ մի է Եկեղեցւոյ, որ եպիսկոպոսին ձեռնադրութիւնը՝ տիրացու, սարկաւագ, և քահանայ կը լլան ոմանք՝ 'ի սպասաւորութիւն սրբ Եկեղեցւոյն։

Հ. Պսակը ի՞նչ է։

Պ. Այնպէս խորհուրդ մի է Եկեղեցւոյ, որ օրինաւորապէս պսակելոց շնորհք կուտայ. և անլուծանելի կապանք կը կապէ զանոնք մինչև 'ի մահ։

Գլուխ Դ։

Յաղագս Ողորմութեան։

Հ. Քանի՞ են գործք ողորմութեան։
Պ. Երկու, այ՝ հոգևոր. և մարմնաւոր։
Հ. Հոգևոր գործք ողորմութեան քանի՞ են։
Պ. Յօթն են, և ասոնք են։
ա. Ուսուցանել զտգէտս։
բ. Տալ զբարի խորհուրդ տարակուսելոյն։
գ. Սնխիթարել զվշտացեալս։
դ. Խրատել զմեղուցեալս։
ե. Ներել ընկերին զընկալեալ վնասս։
զ. Համբերել պակասուն ընկերին։
է. Աղօթել վա՛ կենդանեաց և մեռելոց։
Հ. Մարմնաւոր գործք ողորմութեան քանի՞ են։
Պ. Յօթն են, և ասոնք են։
ա. Կերակրել զքաղցեալս։
բ. Արբուցանել զծարաւեալս։
գ. Հագեցուցանել զմերկս։
դ. Ընդունիլ 'ի տուն զօտարս և զպանդուխտս։

Ե. Ցնանել զՀիւանդս։
Զ. Ելց առնել բանտարկելոց։
Է. Լուսաղել զմեռեալս։

Գլուխ Ը։

Յաղագս Սէղոց։

Հ. Սէղքը ի՞նչ է։
Պ. Ամենայն խօսք, կամ գործ, կամ խորհուրդ, որ Աստուծոյ հրամանքին դէմ է, մեղք է։
Հ. Քանի՞ տեսակ մեղք կայ։
Պ. Երկու, այ՝ սկզբնական. և ներգործական։
Հ. Սկզբնական մեղքը ի՞նչ է։
Պ. Այն մեղքն է, որ ամէն մարդու վրայ կը գտնուի ծնածին պէս. և ասի կը քաշէ՝ ի յանհնազանդութենէ մեր առաջին հօրը՝ այ Ադամայ։ Եւ աս մեղքս կը ջնջուի մարդուն վրայէն սրբ մկրտութիւն։
Հ. Ներգործական մեղքը ի՞նչ է։
Պ. Այն չարն է, որ մարդ խորհրդով, բանիւ, և գործով՝ իւր կամքը կը

գործէ Աստուծոյ հրամանքին դէմ։ Այս սակիս՝ միայն ճշմարիտ ապաշխարութիւն և խոստովանութիւն կրնանք ազատիլ։

Հ. Ներգործական մեղքը քանի՞ տեսակ է։

Պ. Երկու. այ՝ ներելի, և մահուշափ։

Հ. Ներելի մեղքը ի՞նչ է։

Պ. Այն թեթեւ և փոքրիկ չարն է, որ մարդը կը գործէ օրինաց և կանոնաց դուրս. որ դժոխք չիտանիր զմարդը։

Հ. Մահուշափ մեղքը ի՞նչ է։

Պ. Այն ծանր՝ և մեծ չարն է, որ կը զրկէ զմարդը 'ի շնորհացն Աստուծոյ և յարքայութենէն. և դժոխքը կը տանի։

Հ. Քանի՞ են գլխաւոր մահուշափ մեղքերը։

Պ. Յօթն են, և ասոնք են։

ա. Հպարտութիւն։

բ. Նախանձ։

գ. Բարկութիւն։

դ. Աղահութիւն։

ե. Ծուլութիւն։

զ. Սրկրամոլութիւն։

է. Ագջախտութիւն։

Գլուխ ԺԹ։

Յաղագս Վերջնոց Խրատոյն։

Հ. Վերջինք մարդոյ քանի՞ են։

Պ. Չորս են, այսինքն Անհ. Դատաստան. Դժոխք. և Արքայութիւն։

Հ. Դանի՞ դատաստան կայ։

Պ. Երկու. այսինքն առանձնական դատաստան. և ընդհանրական դատաստան։

Հ. Ինչ է առանձնական դատաստանը։

Պ. Այն է, երբոր մարդը կը մեռնի, հոգւոյն կերթայ Դատի առեանը. եթէ ամենեւին արդար է, արքայութիւն կը խրկէ զնա Դա. և թէ արդար է, բայց արատ մը ունի՝ քաւարան կը խրկէ. իսկ թէ անզեղջ մեղաւոր է՝ դժոխք կը խրկէ զնա։

Հ. Ինչ է ընդհանրական դատաստանը։

Պ. Այն է, որ 'ի կատարածի աշխարքիս Դա կու գայ դատաստան ընելու, և ամենեն մարդու որ յարուի առեր

են, իրենց գործքին համեմատ՝ կամ արքայութիւն կու տայ կամ դժոխք կը խրկէ։

Հ. Դժոխքը ի՞նչ է։

Պ. Մէկ զարհուրելի և անդնդային բանտ մի է. և հոն կերթան հին-մայ մեղաւորները հոգւով, և ընդհանրական դատաստանէն ետքը հոգւով և մարմնով, և հոն կը մնան յաւիտեան յաւիտենից, և մէկմընալ չեն կրնար անկից ազատիլ։

Հ. Դժոխքը ի՞նչ կայ։

Պ. Սաստիկ մեծ կրակ կայ, և պէսպէս տանջանքներ։

Հ. Դժոխքը ո՞ւր է։

Պ. Հողուն տակը աշխարքիս մէջ տեղն է։

Հ Քանի՞ դժոխք կայ։

Պ. Հոս։

Հ. Քանի՞ մէկիկ մէկիկ, որ տեսանեմ։

Պ. Ա. առաջին դժոխքը էր լիմպոսը սը՞ Նահապետաց, և Մարգարէից. և Քրիստոս զայն դժոխքը աւրեց։

Երկրորդ դժոխքն է յաւիտենական լիմպոսը չի մկրտուած տղայոց. և հոն կրակ չիկայ։

Երրորդ դժոխքն է յաւիտենական դժոխքը դատապարտեալ մեղաւորաց. և անտեղը անուն՝ և տառանանքը կերին և կրսանջըւին յաւիտեան յաւիտենից։

Չորրորդն է քաւարանը. որ տեղ մի է կրակով լիք. և ան տեղը կերթան ան արդարոց հոգիքը, որ ներելի և փոշիտեսակ մեղաց մէջ մեռած են. և կամ ապաշխարանքնին չեն լմնցուցեր. և հոն կրսանջըւին, մինչև որ մեղքերուն պատիժը լմնայ. և ետքը կազատին, և արքայութիւն կերթան։

Հ. Արդեօք մենք աս քաւարանի մէջ եղած հոգիներուն կրնանք օգնութիւն ընել, թէ չէ։

պ. Իրաւերնս. կրնանք։

Հ. Ինչով կրնանք։

պ. Պատարագով, աղօթքով, ողորմու-

թիւ, և ուրիշ բարի գործքերով ալ կրնանք անոնց օգնել. որ շուտ ազատին քաւարանին տանջանքներէն։

Հ. Աղքատութիւնը ի՞նչ է։

Պ. Այ երեսաց տեսութիւն է, որ կը տեսնեն արդարները. և անտեղը անպատմելի պայծառութիւն և փափկութիւն կուրախանան յաւիտեան յաւիտենից։

Հ. Աղքատութիւնը ո՞ւր է։

Պ. Երկինքն է. կամ աս երեցած աստղերուս վրայ փառաւոր գեղեցիկ և անպատմելի տեղ մի է։

Որուամ արժանի արասցէ ամենողորմն Աստ զամենեսին զնոսա, որք ջանան ուսանիլ և սերտել զայս փոքրիկ քրիստոնէական վարդապետութիւն. Ամէն։

ԽՐԱՏ՝

Ապաշխարութեան խորհուրդին վրայ։

Ինչպէս որ Քրիստոնէական վարդապետութիւնը սորվիլ և լաւ գիտնալ հարկաւոր է ամէն քրիստոնէի, նոյնպէս ալ ապաշխարութեան խորհուրդը լաւ հասկընալ և լաւ կատարել հարկաւոր է. որովհետև մկրտութէ ետքը փրկութեան ճանապարհը ապաշխարութիւն է։ Ասոր համար Քրիստոնէական վարդապետութէ ետքը դրինք աս տեղս մասնաւոր խրատ ապաշխարութէ խորհուրդին վրայ, որ ամէն մարդ աս հարկաւոր խորհուրդը լաւ կատարելու կերպը գիտնայ։

Ապաշխարութիւը՝ ինչպէս վերը ըսինք, Հրես 23. Մէկ խորհուրդ է Հին-

ղէց-ոց, որ ելքնելք մարդուն մեղէրը որ մարդու�էնէ եղ�գործէր է. և կը կառարեն խոստովանութիւն. ինչպէս դրոշմը օծմամբ, և մկրտութիւնը լուացմամբ:

Խոստովանութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ մարդ իր ըրած մեղքերը ինքը պիտի յայտնէ, և մէկիկ մէկիկ իր բերնովը խոստովանի պատմէ խոստովանահօր առջևը, ու մեղայ գոչէ, և արձակում առնու: Այս առ՝ հինգ բանով կը լայ, ինչպէս վերը Արիստոնէական վարդապետութեան մէջ նոյն տեղը ըսինք. այ Ընտրութիւն. Օղջունն. Աղաչադրութիւն. Խոստովանութիւն. և Աղաշխարանաց վճարումն:

Ընտրութիւնը այն է, որ առաջ հանդարտ սրտով քու խղճմտանքդ պիտի քննես, և ամէն մեղքերդ զատ զատ միտք առնուս: Այս որովհետև քննութիւնը քիչը դժուարին է, ասոր համար ընդարձակ կերպով ճամբայ ցրցուցինք վերը՝ որ առանց դժուարութիւն կարենաս կատարել:

Ընտանեաց հոգը պէտք է որ կատարեալ զգուշութիւն ընես, ցի քու մեղքերուդ վրայ մեծ ցաւ ունենաս՝ թէ ինչու համար ըրի։ Աս ցաւը սրտիդ մէջ ամէն ցաւերէն սաստիկ պիտոր ըլլայ՝ թէ ինչու համար իմ ամենարարին Աստուծոյ բարկացուցի, և հաստատ առաջադրութիւն պիտի ընես, որ մէկմէնալ անանկ գործքեր չիգործես Աստուծոյ կամաց դէմ։ Եւ պատրաստական կամք ունենաս պիտոր խոստովանահօրը տուած ապաշխարանքները ընդունելու, և յօժարութիւն կատարելու։

Աս զգուշութիւնը և առաջադրութիւնը դիւրացնելու համար մէկ աղօթքմը դրինք նոյնպէս վարը, որ անոր մէջը նաև կըխոստանաս Աստուծոյ ապաշխարանքներդ վճարել։

Անկից հոգը խոստովանուէ աղօթքնալ պէտք է որ գրուցես, և երթաս խոստովանիս մեղքերդ մէկիկ մէկիկ ամէն պարագայներով իրաւասութիւն խլանութիւն, և հրաման ունեցող քահանային առջևը։

Մեղքերդ զրուցելու առնը ինքդ զինքդ պիտի ամբաստանես, զուրիշը պատճառ չի բռնես։

Ամբշնալէն, կամ ուրիշ բանիմը համար քու կամքովդ խոստովանանքին մէջը մէկ մահուշատի մեղքմը պիտի չիպահես։

Խոստովանանքին մէջ կամաւ սուտ պիտի չի զրուցես։

Մեղքերդ պատմելը լմնցնելէն ետքը՝ խոստովանահօր տուած խրատներուն ու դրած ապաշխարանքին լաւ ուշ պիտի դնես՝ միտք առնուս. որպէսզի ետքը կարենաս կատարել. ապա թէ չէ խոստովանանքը փուճ կը լլայ։

Այն վերջը մեղայ պիտի գոչես ամէն մեղացդ վրայ, եթէ բսածներուդ, եթէ մոռցածներուդ. պզտիկուց՝ի վերինչ որ ըներնես։ Այս արձակում առնուս ելլես. և խոստովանուէ ետքը դրած աղօթքները զրուցես, ապաշխարանքդ կատարես։

Այս ասանկ ամէն բանը զգուշութիւն ընելով ապաշխարութեան խորհուրդը լաւ կրնաս կատարել։

Քննութիւն խղճմտանքի, Աստուծոյ տասը պատուիրաններուն վրայ։

Առաջին պատուիրան։

Ես եմ Տէր Աստուծ քո. մի ունիցիս զայլ ոչ առաջի իմ։

Աստուծ ինքն հրամանէրէս։

Եթէ հաւատքի հարկաւոր բաները սորվելու փոյթ չունեցար, կամ սորվելէն ետքը ծուլութիւնդ մոռցար։

Եթէ քու իշխանութիւնդ տակը եղողներուն սորվեցնելու անփոյթ եղար։

Եթէ կարծիք ունեցար թէ ամէն մարդ իր հաւատքով փրկութիւն կրնայ հասնիլ։

Եթէ հաւատքի մատեանքներուն վրայ երկմտեցար։

Եթէ սրբ բաներու պատիւ չի տուիր։

Եթէ Աստուծ անունը, ու սրբ գրոց բաները պարապ տեղ յիշեցիր։

Եթէ Ս. ստուծմէ աւելի, կամ Ս.Յ հաւասար՝ աշխարքիս մէջ բանը սիրեցիր։

Եթէ մարդկային նկատման, կամ վախու համար ուղղափառութիւնը ուրացար։

Եթէ սատանաներու դիմեցիր։ Եթէ դիւթութիւններու, կախարդութիւններու, և հմայութիւններու, քեզի համար՝ կամ ուրիշին համար մոխիկ ըրիր։ Եթէ ասանկ բաներ սորվեցար, կամ սորվեցուցիր։

Եթէ քու քովդ կախարդական գրքեր՝ կամ համայիլներ պահեցիր։

Եթէ երազներու, կամ երազ մեկնողներու հաւատացիր։

Եթէ հերետիկոսներու գրքեր պահեցիր քովդ, կամ կարդացիր։

Եթէ Ս.Յ ողորմութէն յուսահատեցար. կամ ողորմութիւնը վրայ յանդգնելով՝ չար բաները շարունակեցիր, վարքդ չի շտկեցիր։

Եթէ մեղքերէդ չուզեցիր զղջալ, մահուան ատենը թող տալով։

Եթէ աս կեանքը հանդերձեալ փըրկութենէն աւելի սիրեցիր։

Եթէ հոգևոր բաներէն զզուեցար, կամ ձանձրացար։

Եթէ ինքդ զինքդ ճանչցած ատենդ՝ հաւատոյ յուսոյ և սիրոյ ներգործութիւնները հանելու անփոյթ եղար։ Եթէ աս ներգործութիւնները շուտ շուտ հանելու փոյթ չունեցար, կամ չըրիր։

Եթէ աղօթքի մէջ, ժամասացութիւն, պատարագի առջևը միտքդ վրադ ժողվելու անփոյթ եղար։

Եթէ սէր խորհուրդներու մօտեցած ատենդ լաւ պատրաստութիւն տեսնելու փոյթ չունեցար։

Եթէ Եկեղեցւոյ պաշտօնեայները արհամարհեցիր, կամ ջերմեռանդները ու բարեպաշտները ծաղր ըրիր։

Եթէ սէր կարգ ունեցողի զարկիր, կամ ինչ կերպով ըլլայ նէ կարգին պատիւը՝ ոտից տակ առիր։

Երկրորդ պատուիրան։

Մի առնուցուս զանուն Աստ քո ընդունայն։

Աստ դէմ հեղանիցէս։

Եթէ Աստ, և սրց անունը հայհոյեցիր, և եթէ ըսած ժամանակդ զԱծ բարկացնելու և նախատելու համար ըսիր։

Եթէ պէտք չեղած ժամանակը երդում ըրիր։

Եթէ գիտուելեամբ կամ կարծիքով սուտ երդում ըրիր. կամ ուրիշին սուտ երդեցնելու պատճառ եղար։

Եթէ երդումով բանմը խոստացար, ու չի պահեցիր. կամ եթէ չար բան ընելու կամ բարի բանմը չընելու՝ երդում ըրիր. կամ ուրիշին պատճառ եղար՝ սանկ երդում ընելու։

Եթէ առանց մտածելու պէսպէս ուխտեր ըրիր. կամ ինչ որ ուխտեցիր՝ չի կատարեցիր, կամ չուզեցիր կատարել։

Եթէ զինքդ կամ զուրիշը անիծեցիր։
Եթէ քու վրադ, կամ ուրիշին վրայ
Ոչ անէծքը կամ պատիժը խնդրեցիր։

Երրորդ պատուիրան։

Յիշեա զօր շաբաթուն սրբել զնա.
ՑՍ զկիրակէս։

Ոչոք ԷՏՀ ՀԵՂԱՆԷԷ։

Եթէ ոսն օրերը չի պահեցիր՝ գործելով, կամ ուրիշին գործել տալով Եկեղեցւոյ արգելած գործքերը։

Եթէ կիրակի ոսն օրերը մեղանչական գործքեր ըրիր, կամ մեղաց տեղերը գնացիր զբօսանք ընելու։

Եթէ ամենեին հոգևոր բաներուն եռեռէն չեղար, կամ քու իշխանութեանդ տակը եղողներուն վրայ փոյթ չի տարիր։

Եթէ մահուշափ մեղքիմը մէջ գիտնալով գքեզ Եկեղեցւոյ խորհուրդմը առիր։

Եթէ Եկեղեցւոյ մէջ գէշ մեղքիմը ըրիր, կամ բանադրած ըլլալով Եկե-

ղեցւոյ խորհուրդներ առիր, կամ ժամակարգութիւն ու ածային պաշտօններ կատարեցիր ուրիշներուն հետ, կամ դասը կեցար։

Չորրորդ պատուիրան։

Պատուեա զՀայր քո և զմայր։

Ո՞ՎՔ ԵՔԻ ՀԵՂԻՆԷԷՔ։

Եթէ գործքով կամ խօսքով Հայրդ մայրդ արհամարհեցիր կամ բարկացուցիր։

Եթէ Հայրդ մայրդ բամբասեցիր, և անոնց դէմ բաներ զրուցեցիր։

Եթէ անոնց մահուան ցանկացար, կամ վնասելու նպատակն եղար։

Եթէ զանոնք ծաղր ըրիր, կամ իրենց պակասութիւնը դուրս հանեցիր ու խայտառակեցիր։

Եթէ իրենց հրամանէն դուրս բաներ ըրիր, կամ առանց իրենց հարցնելու տնէն բան վերցուցիր, կամ գողցար։

Եթէ հոգևոր հօրդ կամ վարպետիդ

անհնազանդ եղար, կամ արհամարհեցիր, կամ սրդողցուցիր։

Եթէ պատճառ եղար ուրիշին ալ այսպիսի մեղքեր գործելու, շար օրինակ կամ խրատ տալով։

Եթէ հայրը և մայրը իրենց որդիքը անիծեցին կամ հայհոյեցին։

Եթէ զանոնք լաւ ու պարկեշտ չի մեծցուցին, կամ աղօթք ու Քրիստոնէական վարդապետութիւն չի սորվեցուցին։

Հինգերորդ պատուիրան։

Մի՛ սպաններ։

Ոչ՝ ԿԵՍ ՍԵՂԱՆՆԷՔԷ։

Եթէ մէկը զարկիր, կամ վիրաւորեցիր, կամ սրով, կամ թունով, կամ ուրիշ կերպով մէկը սպաննեցիր, կամ ուրիշին յանձնեցիր սասանկ բանմը ընել. կամ ընողին հաւնեցար։

Եթէ վրէժխնդրութիւն ընելու համար մէկը ատեցիր, և շատ ժամանակ կեցար անանկ։

Նրթէ ատելութիւն կամ ծուռ նայելով զուրիշը վիրաւորեցիր, կամ ուրիշի դէմ ոխ ունենալով քու սրտիդ մէջ սպաննեցիր։

Նրթէ չուզեցիր հաշտուիլ, կամ եղած ֆենասին ներել, կամ ըրած ֆենասիդ համար թողութիւն չուզեցիր։

Նրթէ բարկութիւն զքեզ կամ զուրիշը անիծեցիր, թէ կենդանի ըլլայ և թէ մեռած. կամ բարկութենէ ատենը նախատական խօսքերով զուրիշը սրդողցուցիր ու մեղաց պատճառ եղար։

Նրթէ ուրիշին մէջ խռովութիւն ու թշնամուի սերմանեցիր։ Այս մեղքս շատ կրնայ մեծնալ. անոր համար պէտք է մէկիկ մէկիկ պատմել ինչ չարիք որ ասկից հետևեցաւ, որպէսզի թողուի գտնես։

Նրթէ մեղանչական բաներու համար զուրիշը գովեցիր։

Նրթէ չար օրինակ ու չար խրատ տուիր, գէշ բաները գովելով, ու լաւերը վար զարնելով։

Նրթէ զուրիշը կերցուցիր խմցուցիր

չափէն առնլի, ու գինովցուցիր, քու զբօսանքիդ համար, կամ իրեն ինքս հացնելու համար։

Եթէ աղքատաց դէմ անգթութիւն ըրիր, ատեցիր, արհամարհեցիր, ու լռնտեցիր։

Եթէ գատողութիւնդ գործքը ծուռ մեկնեցիր, և կամ շար կարծիք գնացիր։

Եթէ զուրիշը բամբասեցիր, կամ իրաւ և սուտ՝ անունը աւրեցիր, ետևէն գէշ բաներ զրուցելով։

Եթէ եղբայրական սիրով չի սիրեցիր զուրիշները, և ամենուն բարիք չի կամեցար։

Վերերորդ, և իններորդ պատուիրան։

Մի շնար։ Մի ցանկար կնոջ ընկերի քո։

Այս պատուիրաններու դէմ շատ ուստակ մեղքեր կրնան ըլլալ, որք պէս-

պէս պարագայից համար կը զանազանին, ու շատ կրտարբերին մէկզմէկէ. բայց ամօթալի նիւթ ըլլալով՝ չի վայելեր այնչափ մանրամասն խօսիլ։ Ուրեմն մոռածէ։

Եթէ գէշ ու աղտեղի բաներ մոռածեցիր. եթէ կամաւ անանկ բաներու մէջ կեցար, կամ հեշտացար, կամ անոնց հաւնեցար, կամ գործքով ինքիրենդ՝ կամ ուրիշին հետ կատարեցիր։

Եթէ կամաւ մեղք ընելու ցանկացար, և ան փափագով մէկուն վրայ աչք ձգեցիր, կամ անի սիրեցիր։

Եթէ մարմնաւոր հեշտութիւն անպարկեշտ գրքեր կարդացիր. կամ եթէ բանմը կերար՝ որ զքեզ մեղքի գրգռես. եթէ շար մտքով տեղը գնացիր, կամ անկից անցար՝ զմէկը տեսնելու և հեշտանալու համար. կամ եթէ զինքդ որոգայթի մէջ ձգեցիր մեղանչելու. կամ եթէ երազի մէջ մեղք ընելու մտքով քնացար, կամ արթնցած ատենդ անով հեշտացար։

Ամբողջապէս ինչ ըլլայ թող ըլլայ, աչքով, ականջով, մատաւանդ ձեռքով, և մտքով ամէն պղտիկ մարմնաւոր՝ հեշտութիւն և ցանկութիւն համար եղած բաներդ աս պատուիրաններուն դէմ են. և մեծ մեղք են՝ եթէ որ կամաւոր և հաւանութիւն կը լլան: Ասոր լաւ պէտք է քննես քու խղճմտանքդ աս նիւթիս վրայ: Դէ ամէն բանը, եթէ կամաւոր ըլլայ, և եթէ ակամայ, խոստովանաՀօրդ պէտք է յայտնես:

Դիմներորդ, և տասներորդ պատուիրան:

Մի գողանար: Մի ցանկար ամի, որ ինչ ընկերի քո է:

Ասոր դէմ հեղինէրէս:

Եթէ բանմը գողցար: Ասոր պարագայներդ պէտք է բացատրել, թէ որչափ էր, կամ եթէ սրբազան բանմը էր, կամ 'ի սրբ տեղաց էր:

Չթէ ուրիշներուն ապրանքը պահեցիր իրենց կամքին դէմ. կամ ուրիշին ապրանքը ձեռքդ անցնելով քեզի համար պահեցիր։

Չթէ գնած, կամ ծախած ատենդ ընկերդ խաբեցիր։

Չթէ անիրաւ վաստակի համար ուրիշին ապրանքը ուզեցիր առնուլ, կամ պահել։

Չթէ վաշխառութի (ՅՈՒՍՈՒԼԷՃԻՈՒԹԻ) ըրիր. կամ ասանկ անիրաւ խարդախ ու խաբեբայ մարդու հետ ընկեր վախճառի (ՅՈՒ օրթախ) եղար, որպէսզի անիկակ խաբէ շահի, և դուն բաժին առնուս։

Չթէ քու գործքդ կամ պաշտօնդ լաւ չի կատարեցիր, որ անոր համար օրէ օր վարձ կառնէիր։

Չթէ անիրաւ դատեր հանեցիր, կամ արդար դատերու մէջ խաբէութի ըրիր, քու շահդ կամ խօսքդ առաջ տանելու համար։

Չթէ անպատշաճ (ՅՈՒ մինասիպէթսիզ) միջոցով բանը ստացար, որ իրաւամբ

չէիր կրնար ստանալ. կամ ուրիշին օգուտը ու շահը անիրաւութիւն արգելեցիր։

Եթէ գողութեան ընկեր եղար, կամ գողունի բան գնեցիր, կամ գողին օգնեցիր, յորդորելով, գողցած բանը պահելով, ծախելով, և ինչ կերպով որ ը լլայ։

Եթէ ածան, կամ պակաս գնով բան գնեցիր ուրիշէն, որ կամ գողութիւն էր, կամ գտեր էր, կամ վանդի ծախողը կարօտութեան մէջ էր։

Եթէ գտած բանիդ տէրը չի փընտրտեցիր. կամ տէրը չի գիտնալով՝ աղքատաց չի տուիր։

Եթէ պարտքդ վճարելու անփոյթ եղար, կամ ծառայներուդ ու մշակներուդ վարձքերը կտրեցիր զրկեցիր։

Եթէ վարձքով բռնած բանդ խնայելով չի գործածեցիր, և ինպես հատուցիր տիրոջը։

Եթէ փոխով առած բանդ աւրեցիր, կամ լաւը առիր՝ գէշը դարձուցիր։

Եթէ ուրիշին առուտուրին ինպես հատուցիր։

Եթէ չափէ դուրս վարձք ուզեցիր ծառայութեանդ համար, գիտնալով թէ կարօտ է քեզի։

Եթէ սուտ ստակ գործածեցիր, կամ չիգիտնալով առնելէն եաքը, ուրիշին լաւի տեղ տուիր։

Ուրիշներուդ պատուիրան։

Մի սուտ վկայեր զընկերդ քումմէ։

Ոչ ոք դէմ դեղանիներդ։

Եթէ դատաստանի մէջ, կամ անկից դուրս սուտ վկայութիւն տուիր, կամ զուրիշը ստիպեցիր ասանկ բան ընելու։

Եթէ մահուշտի սուտը ըսիր՝ ընկերիդ վնասին համար։

Եթէ ուրիշին լաւ անունը աւրեցիր սուտ ու մուտ կարծիքներով։

Եթէ զուրիշը բամբասեցիր ու զըրպարտեցիր, շրջած չարութիւնը ըրածի պէս մէկալին զրուցելով։

Եթէ ուրիշին վրայ եղած բամբասանքը սրտանց մոռիկ ըսիր։

Եթէ ուրիշին մէկ մեծ ու ծածուկ մեղքը յայտնեցիր։

Եկեղեցւոյ հինգ պատուիրան-ներուն վրայ։

Առաջին պատուիրան։

Յաւուրս կիրակէից և տօնից տեսանել զպատարագ։

Աստ դէմ հեղինէին։

Եթէ կիրակի ու տօնօրերը հիշ պատարագ չի տեսար, կամ տեսար ալ նէ՝ կիսկատար բանեմը, կամ միտքդ վրադ չի պահելով։

Եթէ եկեղեցւոյ մէջ անպարկեշտ, աս դին՝ ան դին նայելով, մէկին մէկալին հետ խօսելով կեցար, և շնորհաւոր ինչպէս շուտով լրմեցաւ պատարագը։

Եթէ մարդկանց ցրցունելու համար միայն գնացիր պատարագ տեսնել, և ոչ 'ի փառս Աստծոյ:

Եթէ քու իշխանութեանդ տակը եղողներուն փոյթ չի տարիր, որ պատարագ տեսնեն, կամ ուրիշին չի տեսնելու պատճառ եղար:

Երկրորդ պատուիրան:

Պահել զպահս և զծոմապահս հրամայեալս:

Ասոր դէմ հեղանիներէս:

Եթէ մեծ պաքը, կամ ուրիշ հրամայեալ պաքերը և ծոմերը չի պահեցիր:

Եթէ չորեքշաբթի և ուրբաթ պաքդ աւրեցիր:

Եթէ ուրիշին պատճառ եղար, կամ փոյթ չի տարիր որ պահեն, երբոր կընայիր և պարտքդ էր:

Երրորդ և չորրորդ պատուիրան։

Ի տարուոջն գոնէ միանգամ
խոստովանիլ։

Հաղորդիլ գոնէ 'ի տարուոջն միանգամ,
ՅԻ 'Ի ՅԱՏԿԻ ՅԱՐՈՒԹԵՆ ՏՆԵ։

Ընդ որ պէտք դիտանիցիս։

Եթէ խոստովանանք չեղար, կամ Սրբութեն շատիր, հիշ որ չէ նէ տարին անգամին, գոնէ Յատկին օրերը։

Եթէ եղար՝ բայց ամբշնալէն, կամ ուրիշ բանիմը համար խոստովանանքն մէջ մահուշատ մեղքին պահեցիր, և խոստովանանքը փուտ ըլլալով պարտքդ կատարած չեղար։

Եթէ քու իշխանութեանդ տակը եղողներուն աս տարեկան խոստովանութեն, և արքութեն առնելու պարտքը՝ կատարել տալու անփոյթ եղար։

Հինգերորդ պատուիրան։

Տալ զտասանորդս ընչից։

Ասա՞ւ Տէր Հիսուսն։

Եթէ ըստ քու կարողութեդ ողորմութի չի տուիր աղքատաց։

Եթէ հոգևոր բաներէն ետ կեցար ըստակի խնայելու համար, որ կարողութիւն ունէիր, և կըբնայիր, մանաւանդ պարտական էիր ընել։

Եթէ շատ վաստկիլ սիրեցիր, քայց շատ ողորմութի տալ չուզեցիր։

Եօթը մահուշատի մեղաց վրայ։

Հոգեւոր-ի՞ էրէր։

Եթէ չի ճանչցար՝ թէ ինչ բարիք որ ունիս Աստուծմէ են, հապա կարծեցիր թէ քեզմէ՝ ու քու քաջութիդ ունեցար։

Եթէ մեղքամբ ընելուդ համար պարծեցար, կամ բարի բանիմբ համար մեծամտեցար։

Եթէ ինքդ զինքդ հաւնեցար, և զուրիշը արհամարհեցիր։

Եթէ քու խելքիդ աւելի հետևեցար, քան թէ բարի խրատուց, ծնողաց, հոգևոր հարց, ևն։

Եթէ քու խելացուութենդ, իմաստութեանդ, խոհեմութենդ, զօրութենդ, ուվաստակիդ վրայ յուսացիր։

Ութանձրդ մեղք ըսէր։

Եթէ ուրիշին բարիքներուն վրայ տրտմեցար, կամ անոր վնասին ցանկացար։

Եթէ ուրիշին բարիքը խափանել ջանացիր, կամ չի կարելով տանիլ, կամ քեզի բարիք կարծելով։

Ինքնասէր ըսէր։

Եթէ սրդոզած առնդ, թէ սրտով, թէ բերնով. զՆ՝ծ կամ սրբերը կամաւ նախատեցիր կամ անիծեցիր։

Եթէ սատակ վրդովեցար, մինչև

ըրածդ ըսածդ չէիր գիտեր կիրքդ եկած առնելը։

Ը.Գ-ՈՒ-ԸՆ ԵՐԷՐ։

Լրթէ գնած, կամ ծախած, կամ փոխած առնդ, կամ ուրիշ անիրաւ գաշնադրութեան մէջ մէկը խաբեցիր։

Լրթէ շատ հարստութեան ցանկացար։

Լրթէ ըստկի մեծ սէր ունեցար։

Լրթէ ըստկի խնայելով աղքատներու ողորմութի տալու յօժարութի չունեցար։

Ծ-ՈՒ-ԼՈՒ-ԸՆ ԵՐԷՐ։

Լրթէ անփոյթ եղար ինչ որ պէտք է նէ քրիստոնէին սորվիլ. կամ սորվեցնել։

Լրթէ ծուլութեան համար Ը.Յ արժանաւոր պատիւ չի տուիր, կամ բարի բաներու ազդեցութիւնը արհամարհեցիր։

Լրթէ ժամանակդ պարապ անցուցիր։ մէկ հոգևոր կամ մարմնաւոր բարի բանիմը եռնէ չբլլալով։

Լրթէ հոգևոր աղօթքներէն ու ջերմեռանդութիւններէն ձանձրացար, կամ իրիկուն առաւօտ առանց աղօթքի անցուցիր՝ պարզ չաշխատելու և ծուլութեան համար։

Ուղղամտութեան ջրեր։

Նրանք վերջին վախճանը ուտելու խմելու վրայ դրին, ու անկից մահուշափ մեղքիմը մէջ ընկար։

Նրանք այնչափ կերար խմեցիր, մինչև գինովցար, ու զքեզ կորանցուցիր։

Նրանք սասանկ չափէ դուրս ուտելու խմելու բաղձանք ունեցար։

Նրանք անյագաբար և սաստիկ ախորժակաւ ուտելու և խմելու ատենդ կերակրոց ու գինւոյ սէր ձգեցիր։

Նրանք շատ տնտակ անուշահամ ու քաղցր կերակուրներու և գինիներու ետևէն եղար պարզ կոկորդի հեշտութեան համար։

Ընչաքաղութեան ջրեր։

Նրանք մարմնական մեղքովմը հեշտացար, ինչ կերպ ըլլայ թող ըլլայ, թէ մտքով, թէ խօսքով, և թէ գործքով։ Ամենն մեծ ու պզտիկ մարմնական հեշտութիւն աս մահուշափ մեղքին տակն է. ուստի լաւ պիտի քննես քու խղճմտանքդ աս նիւթիս վրայ, ու էն մանտր

պարտականները պիտի յայտնես խոստովանութեան մէջ։

Ասոնց ամէնուն վրայ մնացեալն ետքը ամէն անգամ կրնաս քեզի ամբաստանել խոստովանութեան մէջ, թէ ուրիշին սիրոյ դէմ մեղանչեցիր, վասն զի ինչպէս որ պէտք է սիրել, պատուել, յարգել, և ծառայել Աստուծ, ջրի ըսելով. որովհետև որչափ ընենք միշտ պարտական ենք աւելի ընելու. նոյնպէս ընկերի սիրոյն վրայ ալ. մանաւանդ՝ եթէ ամուսնացեալ ես՝ պէտք է նայիս, թէ ի՞նչ պարտականութիւն կայ ամուսնացելոց մէջ միկզմիկու վրայ։ Դարձեալ՝ եթէ տէր ես, եթէ տիկին ես՝, եթէ սպասաւոր ես, եթէ աղախին ես, ըստ քու վիճակիդ, քոնէ քեզի, և ընկերիդ դէմ պարտքդ ինչ էր նէ, թէ չես ըրած՝ պակաս գտնուիրես նէ, զղջա ամէն մեղքիդ համար, և խոստովանէ։

Աղօթք զղջման և ապաշխարութեան։

Ամենակալ Աստուած և Տէր երկնից և երկրի, Հայր ամենիմաստ ամենաբարի արդար և բարեգութ. քեզ երկիրպագանեմ խոնարհաբար. զքեզ պատուեմ, և յարգեմ. և բաղձամ սիրել զքեզ 'ի բոլոր սրտէ, 'ի բովանդակ մտաց, և յաւէտ զօրութիւնէ իմմէ 'ի վերայ քան զքեզ։ Այլ ինձ, զիարդ անօրինեալ հեռացայ 'ի քէն Աստուած իմ և Տէր։ Այս ահա ճանաչեմ ըստ կարի զխնայանս իմ, և զորս խորհրդով, բանիւ, և գործով, և զանցառութիւն յանցեալ ընդդէմ ահեղ ուժութեան քո. վասն զղջամ իսկապէս, և վշտագին թախծանօք ապաշաւեալ ցաւիմ 'ի բոլոր սրտէ զառնագէտ կրս-կրծանօք 'ի վերայ ամ մեղաց, որովք զուծային մեծվայելչութիւն քո զայրացուցեալ վշտացուցի. և այսօր դարձիմ 'ի նոցանէ զայրագին զգուանօք, և փութամ ցայնմայր սաստիկ ատելութիւն զի-

նել գիմամարտ, մինչև չընծայել երբէք միում 'ի նոցանէ հաւանութիւն միւսանգամ: Եւ քանզի դու միայն ես Հայր ողորմութեան, և Աստուած ամ մխիթարութեան, հայցեմ խոնարհաբար 'ի քումմէ մարդասիրութենէ ներել իմոց բազմապիսի մեղացս յանցանաց, զոր արդեանց շարչարանաց փրկչին իմոյ, և անդին արեան Որդւոյ քո սիրելւոյ. և ապաւինեալ 'ի շնորհաց Հոգւոյդ սքանչելի յօժանդակութիւն, յառաջադրեմ հաստատութիւն սրտի պահել այսուհետև զամ պատուիրանս քո սքբ, և հեռանալ փախչիլ յամ առթից մեղաց, և պատրաստել զանձն իմ մանաւանդ մեռանել՝ քան միւսանգամ մեղանչել և վշտացուցանել զքեզ: Ո՜յ մատչիմ այժմ առ ոտս քո՝ ամ յանցանաց իմոց առնել զխոստովանութիւն կատարեալ, և յօժարակամ սրտիւ զառաջադրեալ ինձ 'ի խոստովանութեան զապաշխարութիւն լիով կատարել:

Եւ զի չունիմ ինչ քեզ վերընծայել

առ. վճարողական բաւականութիւն իմոցս պարտեաց, զիս բոլորովին հոգևոր և մարմնաւոր կարողութիւն 'ի պատարագ ընդունելի, և զամ ինչ զոր կրեմ և գործեմ 'ի փառս մեծիդ Աստուծոյ նուիրեալ, մաղթեմ ընդունել ընդ պատարագի խաչին զընծայս ինչին 'ի միութիւն արդեանց որդւոյ քո ամենի Յսի Քրի, որում ընդ քեզ և Հոգւոյդ սքանչելի փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Աղօթք խոստովանութեան առաջ:

Ո՞վ բարեգութ տէր իմ Յս Քրս, աղաչեմ զքեզ 'ի բոլոր սրտէ և 'ի բովանդակ մտաց, ընկալ զխոստովանութիւն իմ, զոր կամիմ առնել այսօր առաջի մեծվայելչութեան քո, և տուր ինձ զմշտամարիտ և զկատարեալ զղջումն, որպէս զնամ մեղս և զյանցանս իմ: Ո՞վ ամենաքաղցր Յս, առաքեա 'ի հոգի իմ և 'ի միտս՝ զլոյս ճշմարտութեան քո, զի

առաջնորդեալ ուսուցէ զիս կարօղ լինել յայս ահաւոր խորհուրդ ապաշխարութեան բեկեալ սրտիւ, կատարեալ սիրով, և ջերմեռանդն հոգւով մատչիլ, և պատմել առաջի քո մի ըստ միոջէ զամ մեղս և զյանցանս իմ. զի ընկալեալ զքաւութիւն մեղաց և զթողութիւն յանցանաց արդեամբք ամենաքէ շարչարանաց քոց, արժանի եղէց փառաւորել զանուն քո սքբ 'ի յաւիտեանս. Ամէն:

Աղօթ խոստովանութեան էութիւն:

Աղերսի քեզ ՝որ աղերսեմ հաճելի և ընդունելի այս խոստովանութիւն իմ արդեամբք ամենօրհնեալ ծնողի քո Աստուծոյ միշտ կուսին, և ՝ամ սքբց քոց. և եթէ պակասեցայ իւիք 'ի պահանջելոցն առ բաւականութիւն զղջման, առ պարզութիւն արտաքերութեան, և առ ամբողջութիւն խոստովանութեան, յայսմ կամ յայլում նուազի, լցէ զթութիւն քո և ողորմութիւն. զի մարդասիրութիւն քով յամ մասնակցութենէ մեղաց խորհրդոց

բանից և գործոց՝ յերկինս և յերկրի արձակել զիս հաճեսցիս Տ�Ն Ած, որ կենդանի ես և թագաւորես ընդ Հօր, և ընդ սուրբ Հոգւոյդ՝ 'ի յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Աղօթք։

